ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1383-Ա «10» ապրիլի 2024 թ.

ԴԻՄՈՒՄՆԵՐԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.Որոշմամբ լուծվող հարցի նկարագրությունը.

Երևանի քաղաքապետարան հասցեագրված Արա Ավետիսյանի 2024 թվականի մարտի 11-ի թիվ Դ-32896-24 և 2024 թվականի ապրիլի 1-ի թիվ Դ-42965-24 դիմումների հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի դրույթներին համապատասխան իրականացվել է վարչարարություն:

2024 թվականի մարտի 11-ի թիվ Դ-32896-24 և 2024 թվականի ապրիլի 1-ի թիվ Դ-42965-24 դիմումների առարկայի քննության կապակցությամբ 2024 թվականի ապրիլի 8-ին, ժամը 14.00-ին հրավիրված լսումներին ներկայացել և մասնակցել է Արա Ավետիսյանը:

Ուսումնասիրելով 2024 թվականի մարտի 11-ի թիվ Դ-32896-24 և 2024 թվականի ապրիլի 1-ի թիվ Դ-42965-24 դիմումները, դրանց կից ներկայացված նյութերը, 2024 թվականի ապրիլի 8-ին կազմված՝ վարչարարության շրջանակներում իրականացված լսումների վերաբերյալ արձանագրությունը, գնահատելով դիմումի առարկային առնչվող բոլոր փաստական հանգամանքները, պարզվել է հետևյալը.

2. Որոշման կայացման համար հիմք հանդիսացող փաստերը.

2024 թվականի ապրիլի 8-ին հրավիրված լսումների ընթացքում ներկայացված դիրքորոշմամբ Արա Ավետիսյանը, հիմք ընդունելով 2024 թվականի մարտի 11-ի թիվ Դ-32896-24 և 2024 թվականի ապրիլի 1-ի թիվ Դ-42965-24 դիմումներով ներկայացված ապացույցները, խնդրել է փոխհատուցել 2024 թվականի փետրվարի 23-ին Կիևյան կամրջի տակ կայանված «Lada Niva» մակնիշի «01AC011» հաշվառման համարանիշի փոխադրամիջոցի վրա քար ընկնելու արդյունքում պատճառված վնասը, որը կազմում է 269.000 (երկու հարյուր վաթսունինը հազար) ՀՀ դրամ, ինչպես նաև խնդրել է փոխհատուցել նշված ավտոմեքենան ապրանքագիտական փորձաքննության ենթարկելու նպատակով վճարված 40.000 ՀՀ դրամ գումարը:

2023 թվականի նոյեմբերի 23-ին տրված տրանսպորտային միջոցի հաշվառման թիվ YJ547667 վկայագրի համաձայն՝ «Lada Niva» մակնիշի, «01AC011» հաշվառման համարանիշի և XTA212140K2347244 նույնականացման (VIN) համարով փոխադրամիջոցը հանդիսանում է Արա Ավետիսյանի սեփականությունը: Հայաստանի

Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության Մաշտոցի բաժնի պետին ուղղված՝ 2024 թվականի փետրվարի 27-ի զեկուցագրի բովանդակության ուսումնասիրությամբ պարզվել է, որ հաղորդում ներկայացրած Արա Ավետիսյանը ոստիկանության տեսուչին հայտնել է, որ 2024 թվականի փետրվարի 23-ին «Lada Niva» մակնիշի «01AC011» հաշվառման համարանիշի ավտեմեքենան կայանել է «Կիևյան» կամրջի տակ և այցելել ռեստորան, իսկ որոշ ժամանակ անց ձայն է լսել և դուրս եկել, որից հետո մոտենալով ավտոմեքենային նկատել է, որ կամրջից բետոնե կտորներ են պոկվել և ընկել ավտոմեքենայի վրա՝ վնասելով ավտոմեքենայի տանիքը, դիմապակին, շարժիչի ծածկոցը և այլ ավտոպահեստամասեր:

«Հայաստանի անկախ փորձագիտական կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության փորձագետի կողմից 2024 թվականի մարտի 29-ին կազմված՝ ապրանքագիտական եզրակացության «Հետևություն» բաժնի համաձայն՝ փորձաքննությանը տրամադրված 2019 թվականի արտադրության «Lada Niva» մակնիշի, XTA212140K2347244 նույնականացման (VIN) համարով ավտոմեքենայի վնասի վերականգնման ծախսերի (ավտոմեքենան նորմալ շահագործողական վիճակի բերելու համար անհրաժեշտ դետալների, հանգույցների, նյութերի և վերանորոգման աշխատանքների) շուկայական արժեքը, փորձաքննության կատարման ժամանակահատվածի դրությամբ, կազմում է 269.000 (երկու հարյուր վաթսունինը հազար) ՀՀ դրամ:

2024 թվականի ապրիլի 1-ի թիվ B2656123633 հաշիվ վավերագրի համաձայն՝ «Lada Niva» մակնիշի ավտոմեքենայի փորձաքննության վերաբերյալ թիվ 0053/24-Պ պայմանագրի հիման վրա «Հայաստանի անկախ փորձագիտական կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը վճարվել է 40.000 (քառասուն հազար) ՀՀ դրամ:

2024 թվականի մարտի 11-ի թիվ Դ-32896-24 և 2024 թվականի ապրիլի 1-ի թիվ Դ-42965-24 դիմումներին կից, ինչպես նաև 2024 թվականի ապրիլի 8-ին հրավիրված լսումների ընթացքում Արա Ավետիսյանի կողմից չեն ներկայացվել 2024 թվականի փետրվարի 23-ին քար ընկնելու հետևանքով վնասված՝ «Lada Niva» մակնիշի «01AC011» հաշվառման համարանիշի փոխադրամիջոցը հետքաբանական փորձաքննության ենթարկելու արդյունքում կազմված եզրակացություն, ինչպես նաև չեն ներկայացվել պատահարի և առաջացած վնասի միջև պատճառահետևանքային կապը հիմնավորող և վնասը Երևանի քաղաքապետարանի կողմից փոխհատուցման ենթակա լինելու մասին ապացույցներ:

2024 թվականի մարտի 11-ի թիվ Դ-32896-24 դիմումի կապակցությամբ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի թիվ 07/49027-24 գրությամբ Արա Ավետիսյանին պարզաբանվել է, որ «Կիևյան» կամրջի տակ կայանված փոխադրամիջոցի վրա քար ընկնելու արդյունքում առաջացած վնասի փոխհատուցման հարցի քննարկման նպատակով անհրաժեշտ է ներկայացնել գրավոր ապացույցներ փոխադրամիջոցի վնասվածքներն առաջանալու պատճառների, ինչպես նաև պատահարի հետևանքով առաջացած վնասվածքների հետքաբանական և

ապրանքագիտական գնահատման, պատահարի ու վնասի միջև պատճառահետևանքային կապը հիմնավորող փորձագիտական եզրակացություններ:

3. Որոշումն ընդունելու հիմնավորումները.

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վնասներ են՝ իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), ինչպես նաև չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը վարչական վարույթում որպես ապացույց գնահատում է գործում առկա բացատրությունները, ցուցմունքները, փորձագիտական եզրակացությունները, փաստաթղթերը, նյութերը, իրերը, ինչպես նաև այն հանգամանքները, որոնք իր հայեցողությամբ այդ մարմինը պիտանի և անհրաժեշտ է համարում գործի փաստական հանգամանքների բացահայտման և գնահատման համար:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝ անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ գրավոր վարչական ակտն իր բովանդակությամբ պետք է համապատասխանի դրա ընդունման համար օրենքով սահմանված պահանջներին, նշում պարունակի այն բոլոր էական փաստական և իրավաբանական հանգամանքների վերաբերյալ, որոնք վարչական մարմնին հիմք են տվել ընդունելու համապատասխան որոշում:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 96–րդ հոդվածի համաձայն՝ վնասի հատուցում չի իրականացվում, քանի դեռ վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը, որով անձին վնաս է հասցվել, սահմանված կարգով ոչ իրավաչափ չի ճանաչվել, բացառությամբ սույն օրենքի 109-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մայիսի 29-ի «Երևան քաղաքին սեփականության իրավունքով փոխանցվող անհրաժեշտ գույքի ցանկը սահմանելու մասին» N 604-Ն որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանվել է, որ Երևանի ավագանու առաջին ընտրությունից հետո սեփականության իրավունքով անհատույց, ի թիվս այլ գույքի, Երևան քաղաքին են համարվում փոխանցված (հանձնված) նաև կամուրջները:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անշարժ գույք են համարվում հողամասերը, ընդերքի մասերը, մեկուսի ջրային օբյեկտները, անտառները, բազմամյա տնկիները, ստորգետնյա և վերգետնյա շենքերը, շինությունները և հողին ամրակցված այլ գույքը, այսինքն՝ այն օբյեկտները, որոնք անհնար է հողից անջատել՝ առանց այդ գույքին կամ հողամասին վնաս պատճառելու կամ դրանց նշանակության փոփոխման, դադարման կամ նպատակային նշանակությամբ հետագա օգտագործման անհնարինության:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1071.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անշարժ գույքի օգտագործման, տիրապետման, տնօրինման, շահագործման կամ կառուցապատման ընթացքում այլ անձանց կամ նրանց գույքին պատճառված վնասի հատուցման պատասխանատվությունը կրում է անշարժ գույքի սեփականատերը, եթե չի ապացուցում, որ վնասը ծագել է անհաղթահարելի ուժի կամ տուժողի դիտավորության հետևանքով:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1063-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացուն կամ իրավաբանական անձին պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց ապօրինի գործողություններով (անգործությամբ)՝ ներառյալ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի՝ օրենքին կամ այլ իրավական ակտին չհամապատասխանող ակտ հրապարակելու հետևանքով, պատճառված վնասը հատուցում է Հայաստանի Հանրապետությունը կամ համապատասխան համայնքը:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է պատճառված վնասի համար պատասխանատվության պայմաններին, մասնավորապես՝ արձանագրել է, որ վնասի հատուցման համար պարտադիր պայման է իրավունքը խախտած անձի ոչ օրինաչափ վարքագծի, վնասների, վնասների ու ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի և պարտապանի մեղքի միաժամանակյա առկայությունը: Ընդ որում, նշված պայմաններից որևէ մեկի բացակայության դեպքում վնասը ենթակա չէ հատուցման (տե՛ս, Նատալյա Հակոբյանն ընդդեմ Վարդան Հայրապետյանի թիվ ՀՔԴ3/0016/02/08 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը):

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ Արա Ավետիսյանի կողմից չի ներկայացվել փոխադրամիջոցի հետքաբանական փորձաքննության եզրակացություն, ինչպես նաև չեն ներկայացվել պահանջված վնասը Երևանի քաղաքապետարանի ոչ իրավաչափ անգործության անմիջական և ուղղակի հետևանքը հանդիսանալու (պատահարի և վնասի միջև պատճառահետևանքային կապ), Երևանի քաղաքապետարանի կողմից փոխհատուցման ենթակա լինելու վերաբերյալ ապացույցներ, ինչով պայմանավորված՝ վարչարարությամբ չի ապացուցվել վնասը

Երևանի քաղաքապետարանի կողմից հատուցելու պահանջի իրավաչափությունը, ուստի հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 17-րդ, 1058-րդ, 1063-րդ հոդվածների դրույթները և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 42-րդ, 43-րդ և 96-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1.Երևանի քաղաքապետարան հասցեագրված Արա Ավետիսյանի՝ վնասը փոխհատուցելու մասին 2024 թվականի մարտի 11-ի թիվ Դ-32896-24 և 2024 թվականի ապրիլի 1-ի թիվ Դ-42965-24 դիմումները մերժել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն ստանալու հաջորդ օրը:

3.Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ